դաշտը, մինչեւ Ատրպատական, մինչեւ Կովկաս աստուածների այդ ահարկու պայքարը տարածեց իր ահը եւ սարսափը, տակնուվրայ արաւ, քանդեց, մոխիրի վերածեց բովանդակ երկիրներ ու նոր առասպելներ թաւալգլոր թափով հոգիներին մրրիկ եւ փոթորիկ բաժանեց:

Անցան դարեր: Աստուածները նորից քաշուեցին բարձրարարձր գագաթների վրայ եւ յառեցին անհունը: Արեւի ճառագայթներից անդին, խորը տարածութիւնների մէջ, այնտեղ ուր անծայրը կպչում է ուրիշ մի անծայրի, ուր տարերային տիեզերական ուժերը՝ արտացոլելով բովանդակ կեանքի գերագոյն ռիթմը՝ ներկայանում են ամբողջացած ներդաշնակութեան մէջ, նրանք տեսան ուրիշ մի լոյս, աւելի հարազատ, աւելի ներքին եւ աւելի պայծառ: Հաղորդակից եղան նոր մի խմաստի, ըմբռնեցին նոր մի կշռոյթի գերագոյն բնոյթը, հոգեղենացան եւ այլակերպութեան ենթարկեցին իրենց էութիւնը: Ցիրապատեցին տիեզերքի վրայ: Իջան մինչեւ այն կէտը, ուր հոգեկան կեանքը սերմնացման է ենթարկւում: Արտաքին պայքարի դէմ ծաղկածման բարդ եւ թաքնաթափուր օրէնքը հաստատեցին: Դարձեցին աստուածներ լինելուց եւ դարձան աստուածային:

Ու մենք, մեր քրիստոնէական տաճարները զետեղեցինք լեռների վրայ: Մղոններ մագլցեցինք եւ պարզեցինք տարածութիւններին մեր նոր կեցուածքը: Մասիսի գագաթը դմբէթի վերածեցինք, դաշտերի ծաղիկներից միւռոն եփեցինք՝ Շամիրամի բնոյթը սրբացրինք՝ եւ արեւային ջերմութեամբ օծեցինք լուսեղէն հոգիները:

* * *

Հոխոսիմէի ճարտարապետական ձեւը երկու հակադէմ՝ Շամիրամեան եւ արայեան՝ ըսկզբունքների հանճարեղ միացումն է, որով հայ ոգին սահման է քաշում իր եւ արտաքին ազդեցութիւնների մէջ: Նա առանձնանում է, հաստատելով սեփական արժէքների կայուն եւ չարժական բնոյթը: Ինչպէս ամէն մի պարզութիւն նա բարդ է եւ բիւրեղ: Գրեթէ լերկ ու մերկ, առանց զարդի, առանց քանդակի, նա կուտակուած պայծառութիւն է, արեւային եւ առնական: Քանակով փոքր նա սեղմուած եւ ամրապնդուած որակ է, նշան:

Հոխոսիմէի պարզութիւնը, հոմերոսեան պարզութեան նման, երկար եւ դժուարին պրոցէսի հետեւանք է, հակադէմ եւ իրար դէմ պայքարող դաշտային եւ լեռնային, լուսնային եւ արեւային հոսանքների համադրութիւնը: Այստեղ, ճակատագրի կոյր եւ անհասկանալի ուժը եւ դատապարտուած մարդկութեան սարսափը միանդամայն յաղթուած է: Դաշտը՝ մարդկային կեանքի ողբերգութեան, կրքի եւ չարչարանքների վայրը ներկայանում է իբրեւ հիմք, իբրեւ բաղուկ, որի վրայ կարկառուած է անփոփոխ գագաթը, մնայուն նշանը, լեռնային դմբէթը:

Այստեղ անտառ չէ, ինչպէս գոթական ոճին մէջ, բլաձեւ ծածկոցը, ինչպէս բիւզանդականում, թմբաձեւ զարդը պարզ տանիքի վրայ, ինչպէս ռուսականում կամ թագանման վերելքը ինչպէս արեւմուտքում. այստեղ՝ դմբէթը ինքը իրեն նպատակ է, ինչպէս լեռան գագաթը: Հայկական տաճարը այն տունը չէ, ուր ապրում է Աստուած եւ ուր ժողովում է համայնքը, այլ լեռան խորհրդանշանն է, սրբոտերի հետ ապրող Մասիսի գագաթը, անհունի հետ կանգնած աստուածների բարձրարերձ հայրենիքը:

Ուստի եւ բնական է քանդակների բացակայութիւնը: Քանդակը արտաքին աշխարհի արտացոլումն է, գաղափարների մարմնացումը, բնական երեւոյթների արտանկարումը: Քանդակը պատկերացնում է յիշատակ եւ ձեւակերպութիւն, մինչդեռ հայ եկեղեցին ինքը իր մէջ պարփակուած իրականութիւն է, հաստատուն ապրում, վսեմ գոյութիւն:

Եթէ մենք մօտենանք մեր քրիստոնէութեան խորը գննող աչքով, դուրս հանելով դարերի եւ պարտադրիչ ազդեցութիւնների տարրերը, մենք կը հանդիպինք Արայի եւ Տրդատի թագաւորական բնոյթին: Կրօնքը իրեւ լարուած աղեղ յանուն լեռնային եւ արեւային սկզբունքի:

Շամիրամի հարուածի տակ ընկած Արան նորից վերակենդանանում է եւ միանում է Տրդատի անմահացած գոհին՝ Հոխոսիմէին: Հայ ոգին զգեստաւորւում է լոյսով, միացնում է առնական իր բնոյթը հոգեկան մշտնջենական տենչանքի հետ եւ այդ իրականութիւնը հաստատում է ուրոյն ոճով:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան